ջողպէս վերջացնելով՝ նոյն համալսարանում թողնվեց որպէս պրոֆեսոր-դոցենտ, մի քանի տարի, իսկ 1900 թ. միևնոյն համալսարանում դասախօսութիւններ սկսեց կարդալ արդէն, որպէս պրոֆեսոր վրաց պատմութիւնից և գրականութիւնից։

Վարելով հանդերձ այսպիսի կարևոր պաշտօն գիտութեան բարձրագոյն տաճարում, հանգուցեալ ուսուցչապետը անկուն կերպով աշխատում էր վրաց բանասիրութեան և առ հասարակ գրականութեան ասպարէզում, տալով գիտական նորանոր արտադրութիւններ և ուսումնասիրութիւններ իրարից աւելի հետաքրքրական և կարևոր, որ մենք չենք կարող մի առ մի թւել, ի նկատի ունենալով օրաթերթի սուղ էջերը։

Ա. Խախանովի անդուլ աշխատասիրութեան գլուխ գործոցը իրաւացիօրէն համարվում է վրաց հին գրականութեան ուսումնասիրութիւնը, որպիսի ասպարէզում նա մեծ դեր կատարեց, որով և վրաց գրականութիւնը նրան մեծապէս պարտական է։

Սակայն նրա քաջայրված առողջութիւնը չը կարողացաւ դիմանալ յոգնեցուցիչ և ծանր աշխատանքին, և նա դեռ ևս երիտասարդ հասակում զոհ գնաց թոքախտին։

Այսպիսով անողոք մահը խլեց և մի բեղմնաւոր գրական դէմք, լուսակաց. բայց և խիստ արդիւնաւէտ գործիչ, որի մահով զոյացած բացը շատ զգալի կը լինի առաւելապէս վրացիների համար։

Իր կաճատն, բայց բեղմնաւոր կեանքի ընթացքում Ալ. Խախանովը ամենայն սրբութեամբ կատարեց իր քաղաքացիական պարտականութիւնները հանդէպ իր հայրենիքի և վրաց ազգի, որին օգնութեան հասաւ իր մահից յետոյ էլ նիւթապէս, թողնելով 45,000 ռուբլու չափ իր կարողութիւնը Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեանը կրթական նպատակներով, որպիսի Ընկերութեան հիմնադիր և գործունեայ անդամներից էր ինքը հանգուցեալը։

Դասպարեան

ՄԻ ԱՌԱՋԱՐԿ ԷԼ

Այսօր հրապարակի վրա է դրված, թէ ինչպէս պէտք է տօնել, յաւերժացնել հայկական կուլտուրական կեանքի երկու մեծ տօները՝ տառերի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը։

Դեռ մեծ գործը իր սաղմի մէջ երկպառակութեան ենթակայ է։ Վիճում են լրագրութեան միջոցով, թէ Էջմիածնի առաջարկներն են ճիշդ և կարևոր, թէ Թիֆլիսի Յօր. Ծանձնաժողովինը։

Կուզէի ես էլ իմ խօսքն ասել, գիտակցելով որ ամեն մի մարդու պարտքն է, եթէ հետաքրքրվում է այս խնդիրներով, իր ձայնը բարձրացնել։

Դարեր շարունակ մենք գիտենք, որ հոկտ. 13-ը ս. Թարգմանչաց տօնի օրն է եղել, ուրեմն և առանդութեան բերանով մեզ հասած ու շատ բան հաստատող այդ օրը թող մեզ համար նշանակութիւն ունենայ և պատմական դառնայ այս մեծ տօները նոյն օրը կատարելով։ Այնուհետև մինչև այժմ հրապարակ դրված առաջարկութիւններից, իմ կարծիքով, ամենից լաւագոյնը և արժէքաւորը Էջմիածնի Յօր. Ծանձնաժողովի որոշած «Դպրոցական ֆոնդն» է։ Այդ որոշումը միանգամայն նպատակայարմար է, որովհետև այդ ֆոնդից համայն հայութիւնը կարող է օգտվել և հայկական ցրիւ մասերը օգակող Էջմիածնի Յօր. Ծանձնաժողովն այլ գեղեցիկ որոշում անել չէր կարող, քան այդ Երկրորդ տեղը կարելի է դնել «Գրական ֆոնդի» հարցը, այն տեսակէտից, որ գրականագէտները պատկանում են այն դասակարգին, որոնք մշտական շահագործվում ու տուժում են յանուն հասարակական շահերի, հետևապէս գրականութեան սիւներն են նրանք և հատուցման արժանի։

Այնուհետև բացի այն մասնակի ու թեթև հարցերից, որոնց իրականացումը մասնաւոր անհատների, խմբակցութիւնների գործ է, աչքից չէ վրիպում մի համայնական շատ կարևոր և ժամանակակից հարց։ Այդ՝ Օշականի ս. Մեսրոպեան դպրոցի 4-դասեան շրջանային դարձնելու և ս. Մեսրոպի կիսասդրու հարցն է։

Հարցեր, որոնք առանձին ուշադրութեան արժանի են, որովհետև հայ ազգը ս. Մեսրոպից դուրս պատմական մեծ նշանակութիւն ունեցող անձն գտնել չէ կարող, հետևապէս արժէ, որ նրա յօբելեանի օրը մի մեծ գործով յաւերժացնենք նրա մեծ անունը, աշակցենք իրականացնել Օշականի յանձնաժողովի որոշումները։ Իրօք՝ եթէ նայենք անցեալին, ս. Մեսրոպի համար հայ ազգը ոչինչ նշանաւոր բան չէ արել, մինչդեռ մենք գիտենք, որ վերածնութիւնից յետոյ է, ինչ մարդկային միտքը՝ դարերով կաղկանդված մշկնադարի հեղձ մթնոլորտում՝ սկսում է արագ նուաճումներ անել քաղաքակրթութեան իրական լայն ասպարէզում։ Մենք գիտենք, որ հայ տպագրութիւնը տառերի գիւտից յետոյ ծաղկեց, ուրեմն հայկական վերածնութեան արգասիքն է, նրա հետ անպայման պատճառապէս շաղկապված, առանց նրան չէր կարող ծնվել ու ապրել, ուրեմն տառերի գիւտը աւելի կարևոր է և նշանակալից։

Պատմական մեծ փաստ է, որ տառերի գիւտը կատարվել է ս. Մեսրոպի ձեռքով։ Նա մեզ կենդանի ապրեցնող լիզու է տուել, ուրեմն էլ ինչպէս պէտք է մոռանանք նրան՝ մեծ վարդապետին և այժմ իր հերթին նրա մեծագործութեան դիմաց զոնէ մի չնչին բան չանենք նրա համար։ Գուցէ շատերը անհեթեթաբար արժանի չեն գտնի նրան մեծարելու։ Մենք կարծում ենք այդպիսի բան լինել չէ կարող, որովհետև ինչ որ մեծութիւն է, նա յարգանքի է արժանի և փոքրութիւն լինել չէ կարող այնու, ով ապրում է ցեղի սրտում, նա ցեղի պաշտամունքի առարկան է ու երկրպագութեան արժանի մեծ կոթողը։ Այդ գործը իրականացնել իրօք ամենքիս պարտքն է։

Ուսուցիչ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Անեարիերուբիւն է.

Բրբեմ, 24 յուլիսի

Ամսիս 22-ին տեղիս հայոց ուսումնարանի օգտին «Մինեբալնիյ» պարկում, նախաձեռնութեամբ տ. Կալամքարեանի և հոգաբարձութեան ու պ. պ. Մելքոն և Յովհաննէս Յակոբեանների մասնակցութեամբ, զբօսանք տրվեց։ Ղեկավարութեամբ դերասան Օհանեանի ներկայացվեց «Օղրանա» օպե-